

Քաղվածք

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից

Երևան, 13 մայիսի 2019թ.

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակում համալրում կատարելու համար՝ անցկացնելով փակ մրցույթ, 2019թ. մայիսի 13-ի նիստում քննարկեց Կ. Ս.-ի վերաբերյալ եզրակացություն տալու հարցը:

Հաշվի առնելով ստուգման արդյունքները և ղեկավարվելով ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 26-ի թիվ 43 հրամանի N 1 հավելվածի 26-րդ կետով և ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 9-րդ ենթակետով, Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

Բացասական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Կ. Ս.-ի վերաբերյալ: